ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2026

Թեստերի առաջադրանքներ

Ի գիտություն դիմորդներին

Քննական թեստը ներառում է 20 առաջադրանք, որոնց կատարման համար դիմորդին տրամադրվում է 60 րոպե ժամանակ:

ԹԵՄԱ - ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Տնտեսագիտությունն ուսումնասիրում է.
   1) Մարդկանց միջև առաջացած տնտեսական հարաբերությունները
   2) Իրավական օրենքները
   3) Քաղաքական հիմնախնդիր
   4) Բոլոր պատասխանները ճիշտ են

2. Նշված դրույթներից որը կապ չունի տնտեսագիտության սահմանումների հետ.
   1) Անսահմանափակ ռեսուրսները
   2) Պահանջմունքների առավելագույն բավարարումը
   3) Ռեսուրսների արդյունավետ օգտագործումը
   4) Նյութական և հոգևոր պահանջմունքները

3. Ո՞րն է անալիզի մեթոդի էությունը.
   1) Առանձին տարրերի միավորումը որպես մեկ ամբողջություն
   2) Հետազոտվող առարկայի բաղադրիչ մասերի բաժանումը
   3) Հետազոտվող առարկայի ուսումնասիրությունը մտահանգումով
   4) Նշված բոլոր պատասխանները ճիշտ չեն

4. Ո՞րն է սինթեզի մեթոդի էությունը.
   1) Առանձին տարրերի միավորումը որպես մեկ ամբողջություն
   2) Հետազոտվող առարկայի բաղադրիչ մասերի բաժանումը
   3) Հետազոտվող առարկայի ուսումնասիրությունը մտահանգումներով
   4) Նշված բոլոր պատասխանները ճիշտ չեն

5. Ինդուկցիան որպես հետազոտման մեթոդ.
   1) Շարժում է փաստերից դեպի տեսություն
   2) Շարժում է տեսությունից դեպի փաստ
   3) Տնտեսական վերլուծություն է
   4) Երևույթի բաժանումն է առանձին մասերի

6. Դեդուկցիան որպես հետազոտման մեթոդ.
   1) Շարժում է փաստից դեպի տեսություն
   2) Շարժում է տեսությունից դեպի փաստ
   3) Տնտեսական վերլուծություն է
   4) Մաթեմատիկական մեթոդ է

7. Թվարկած տնտեսական նպատակներից որն ունի ճշգրիտ քանակական որոշակիություն.
   1) Տնտեսական ազատություն
   2) Լրիվ զբաղվածություն
   3) Տնտեսական երաշխիքներ
   4) Եկամուտների արդարացի բաշխում

8. Եթե տնտեսությունը հետազոտվում է որպես մեկ ամբողջություն, ապա դա կոչվում է՝
   1) Միկրոտնտեսագիտություն
   2) Մակրոտնտեսագիտություն
   3) Նորմատիվային
   4) Պոզիտիվային

9. Պոզիտիվային տնտեսագիտությունն ուսումնասիրում է.
1) Այն, ինչ կա
2) Այն, ինչ պետք է լինի
3) Տնտեսական զարգացման դրական միտումները
4) Վերևում նշվածները ճիշտ չեն

10. Թվարկած երևույթներից որն է ուսումնասիրում միկրոտնտեսագիտությունը.
1) Արտադրությունը հասարակության մասշտաբով
2) Զբաղվածությունը ամբողջ տնտեսության մեջ
3) Գների ընդհանուր մակարդակը
4) Նավթի արտադրությունը և դրա գների դինամիկան

ԹԵՄԱ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ

11. «Ի՞նչ, ինչպե՞ս և ո՞ւմ համար» հիմնախնդիրները վերաբերում են.
1) Միայն պլանային համակարգին
2) Միայն շուկայական էկոնոմիկային
3) Միայն զարգացած երկրներին
4) Ցանկացած հասարակարգի՝ անկախ դրա սոցիալ-տնտեսական և քաղաքական բնույթից

12. Նոր մարզադաշտի շինարարության այլընտրանքային ծախսերը.
1) Դրա պահպանության ծախսերն են
2) Դրա շինարարության ծախսերն են՝ նախորդ տարվա գներով
3) Դրա գործունեությունից ստացված եկամուտներից վճարվող հարկն է
4) Այն ապրանքների և ծառայությունների գինն է, որոնցից հրաժարվել ենք հօգուտ տվյալ շինարարության

13. Ո՞րն է այն հիմնական խնդիրը, որը բնորոշ է բոլոր տնտեսական համակարգերին.
1) Ներդրումները
2) Արտադրությունը
3) Սպառումը
4) Ռեսուրսների սահմանափակությունը

14. Թվարկածներից որն է ոչ տնտեսական բարիք.
1) Նավթ
2) Հաց
3) Քամու էներգիան
4) Գրքեր

15. Չվերարտադրվող ռեսուրս կարելի է համարել.
1) Աշխատանքային ռեսուրսը
2) Անտառանութը
3) Բնական գազը
4) Ոչ մեկը

16. Թվարկած բարիքներից որն է հոգևոր պահանջմունք բավարարում.
   1) Հագուստ
   2) Ավտոմեքենա
   3) Սնունդ
   4) Թատրոն

17. Թվարկած բարիքներից որն է նյութական պահանջմունք բավարարում.
   1) Կինո
   2) Համերգ
   3) Ցուցահանդես
   4) Հագուստ

18. Տնտեսական պահանջմունքների աճը ո՞ր օրենքով կարելի է բացատրել.
   1) Ժամանակի տնտեսման
   2) Պահանջմունքների զարգացման (բարձրացման)
   3) Արժեքի
   4) Իրավական

19. Տնտեսական պահանջմունքը ինչպիսի՞ կատեգորիա է.
   1) Սուբյեկտիվ
   2) Պատմական
   3) Օբյեկտիվ
   4) Քաղաքական

20. Տնտեսական բարիքները.
   1) Տրված են բնության կողմից
   2) Ստեղծվում են մարդկանց տնտեսական գործունեության արդյունքում
   3) Անսահմանափակ են
   4) Բոլորը սխալ են

ԹԵՄԱ - ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

21. Նշվածներից որը չի համապատասխանում շուկայական տնտեսության էությանը.
   1) Մրցակցությունը
   2) Մասնավոր սեփականությունը
   3) Գների ազատ սահմանումը
   4) Ամբողջ տնտեսության պլանավորումը

22. Սեփականությունը.
   1) Բնության և մարդու հարաբերություն է
   2) Մարդկանց միջև հարաբերություն է իրերի (բարիքների) կապակցությամբ
   3) Իրավական հասկացություն է
   4) Բարոյական հասկացություն է

23. Շուկայական էկոնոմիկայում սեփականության սուբյեկտ կարող է լինել.
1) Պետությունը
2) Ֆիրմաները
3) Տնային տնտեսությունը
4) Բոլորը

24. Շուկայական էկոնոմիկայում սեփականության օբյեկտ կարող է լինել.
1) Աշխատուժը
2) Արժեթղթերը
3) Արվեստի գործերը
4) Բոլորը

25. Բաժնետիրական սեփականությունը ձևավորվում է.
1) Բաժնետոմսեր թողարկելով և վաճառելով
2) Էկոնոմիկայի նախարարության գիտությամբ
3) Պետության մասնաբաժնով
4) Բոլոր պատասխանները ճիշտ են

26. Ո՞ր ոլորտում է գերակշռում պետական սեփականությունը ժամանակակից երկրներում.
1) Առևտուր
2) Զբոսաշրջություն
3) Էներգետիկա
4) Սպորտ

27. Ո՞ր ոլորտում է գերակշռում մասնավոր սեփականությունը ժամանակակից երկրներում.
1) Լեռնահանքային արդյունաբերություն
2) Գազամատակարարում
3) Սպասարկման ոլորտ և առևտուր
4) Ռազմական արդյունաբերություն

28. Մտավոր սեփականության օբյեկտներ կարող են լինել.
1) Հեղինակային իրավունքը
2) Արվեստի գործերը
3) Արդյունաբերական նմուշները
4) Բոլորը

29. Նշվածներից որը բնորոշ չէ շուկայական տնտեսությանը.
1) Մրցակցությունը
2) Կենտրոնացված պլանավորումը
3) Մասնավոր սեփականությունը
4) Ձեռնարկատիրական գործունեության ազատությունը

30. Որո՞նք են շուկայական ենթակառուցվածքի տարրերը.
1) Աճուրդները
2) Բանկերը
3) Գովազդը
4) Բոլորը

ԹԵՄԱ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ, ԴՐԱ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

31. Զուտ հասարակական բարիքներ են նրանք.
    1) Որոնց արտադրությունն ու սպառումը կապված է ստվերային գործունեության հետ
    2) Որոնց արտադրությունն ու սպառումը կապված չէ շրջակա միջավայրի հետ
    3) Որոնք սպառվում են առանց շրջակա միջավայրը աղտոտելու
    4) Որոնք սպառվում են մարդկանց կողմից՝ անկախ դրանց դիմաց վճարելու փաստից

32. Թվարկած հասարակական բարիքներից որոնք են զուտ հասարակական բարիքներ.
    1) Տաքսի ծառայությունը
    2) Ազգային պաշտպանությունը
    3) Թոշակային ապահովվածությունը
    4) Կաբելային հեռուստատեսությունը

33. Թվարկածներից որը հասարակական բարիք չէ.
    1) Բնակչի սպառած էլեկտրաէներգիան
    2) Ջրհեղեղից պաշտպանող ամբարտակը
    3) Ոստիկանության ծառայությունը
    4) Երկրի պաշտպանությունը

34. Մասնավոր տնտեսական բարիքին ո՞ր հատկանիշներն են բնորոշ.
    1) Սպառման ծավալները չեն փոքրանում են այլ սպառողների կողմից օգտագործվելիս
    2) Իրացվում են շուկայական գներով
    3) Դրանց սպառումից հնարավոր է բացառել այլ անձանց
    4) Բոլորը ճիշտ են

ԹԵՄԱ - ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

35. Ըստ պահանջարկի օրենքի՝ պահանջարկի մեծությունը կախված է.
    1) Ապրանքի գնից
    2) Օգտակարությունից
    3) Առաջարկից
    4) Բոլորից

36. Պահանջարկի և գնի կապը.
    1) Ուղիղ համեմատական է
    2) Հակադարձ համեմատական է
    3) Կապ չկա
    4) Բոլոր պատասխանները սխալ են

37. Շուկայական պահանջարկի կորն ունի.
    1) Բացասական թեքում
    2) Դրական թեքում
    3) Ուղղահայաց դիրք
    4) Հորիզոնական դիրք

38. Եթե պահանջարկի կորը գրաֆիկի վրա տեղաշարժվում է աջ, դա նշանակում է, որ.
1) Առաջարկն է աճել
2) Առաջարկը կրճատվել է
3) Պահանջարկն է աճել
4) Պահանջարկը կրճատվել է

39. Եթե պահանջարկի կորը գրաֆիկի վրա տեղաշարժվում է ձախ, դա նշանակում է.
1) Պահանջարկը կրճատվել է
2) Պահանջարկը աճել է
3) Առաջարկն է կրճատվել
4) Առաջարկն է աճել

40. Ըստ առաջարկի օրենքի՝ առաջարկի մեծությունը կախված է տվյալ ապրանքի.
1) Պահանջարկից
2) Գնից
3) Օգտակարությունից
4) Բոլորը

41. Առաջարկի և գնի կապը.
1) Ուղիղ համեմատական է
2) Հակադարձ համեմատական է
3) Կապ չկա
4) Բոլոր պատասխանները սխալ են

42. Առաջարկի կորն ունի.
1) Ուղղահայաց դիրք
2) Դրական թեքում
3) Բացասական թեքում
4) Բոլոր պատասխանները ճիշտ են

43. Եթե առաջարկի կորը տեղաշարժվում է աջ, դա նշանակում է.
1) Առաջարկը կրճատվել է
2) Առաջարկն աճել է
3) Պահանջարկն աճել է
4) Պահանջարկը կրճատվել է

44. Եթե առաջարկի կորը տեղաշարժվում է ձախ, դա նշանակում է.
1) Առարկը կրճատվել է
2) Առաջարկը մեծացել է
3) Պահանջարկն է կրճատվել
4) Պահանջարկն աճել է

45. Գնի անփոփոխ պայմաններում տվյալ ապրանքի առաջարկի վրա ազդում են.
1) Եկամուտները
2) Ռեսուրսների քանակը (գները)
3) Հարկերը
4) Բոլորը

46. Արտադրողի վճարած հարկերի մեծացման դեպքում առաջարկի կորը տեղաշարժվում է.
1) Ձախ
2) Աջ
3) Մնում է անփոփոխ
4) Բոլոր պատասխանները սխալ են

47. Ո՞ր գործոնն է պահանջարկի մեծությունը տեղաշարժում կորի վրայով.
1) Տվյալ ապրանքի գինը
2) Սպառողների եկամուտները
3) Սպառողների ճաշակը
4) Նորաձևությունը

48. Ապրանքների և ծառայությունների շուկայում հավասարակշռության վիճակ է, եթե.
1) Պահանջարկը հավասար է առաջարկին
2) Առաջարկի ծավալը հավասար է պահանջարկի ծավալին
3) Տեսխնոլոգիկան զարգացումը դանդաղ տեմպ ունի
4) Պահանջարկը մեծ է առաջարկից

ԹԵՄԱ - ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐ

49. Տնտեսական ծախսերը ներառում են.
1) Ներքին և արտաքին ծախսերը
2) Միայն ներքին ծախսերը
3) Միայն արտաքին ծախսերը
4) Սահմանային ծախսերը

50. Ֆիրմայի համար հաստատուն (FC) ծախսեր են.
1) Ծախսեր, որոնց կատարումը տեղի է ունենում նույնիսկ արտադրանք չթողարկելու դեպքում (օր.՝ վարձակալություն)
2) Արտադրանքի ծավալի փոփոխման հետ կապված ծախսերը
3) Արտադրանքի ավելի մեծ ծավալի թողակման ծախսերը
4) Գործարքային բոլոր ծախսերը

51. Գործարքային (տրանսակցիոն) ծախս են համարվում.
1) Տեղեկատվության տարածման համար կատարվող ծախսերը
2) Սեփականության իրավունքի պաշտպանության ծախսերը
3) Պայմանագրերի կնքման հետ կապված ծախսերը
4) Բոլորը ճիշտ են

52. Նշված ծախսերից որն է փոփոխուն (VC) ծախս.
1) Հումքի ձեռքբերման ծախսերը
2) Կառավարչական անձնակազմի աշխատավարձը
3) Ռենտան կամ վարձավճարը
4) Ամորտիզացիան

53. Կատարյալ մրցակցային շուկան ենթադրում է, որ.
1) Շուկայում գործում են մեծ թվով գնորդներ և վաճառողներ, որոնք արտադրում են միատարր ապրանք և չեն կարող ազդել գնի վրա
2) Շուկայում գործում են մի քանի վաճառող
3) Առկա է միայն մեկ գնորդ
4) Գինը սահմանվում է պետության կողմից

54. Ո՞ր հատկանիշը բնորոշ չէ կատարյալ մրցակցային շուկային.
1) Մեկ արտադրող
2) Մուտքի և ելքի արգելքների բացակայություն
3) Գնորդների մեծ թիվ
4) միատարր ապրանք

55. Նշված հատկանիշներից որն է բնորոշ կատարյալ մրցակցային շուկային.
1) Շուկա մուտքի և ելքի արգելքների բացակայությունը
2) Գների վրա հսկողությունը
3) Գնային դեմպինգ
4) Սահմանափակ թվով մասնակիցներ

56. Ոչ կատարյալ մրցակցության շուկային ո՞ր հատկանիշն է բնորոշ.
1) Շուկա մուտքի իրավական կամ տնտեսական արգելքները
2) Մուտքի և ելքի արգելքների բացակայություն
3) Գնորդների մեծ թիվ
4) Միատարր ապրանք

57. Եթե բնակավայրում բացվել է առաջին և միակ դեղատունը, ապա դա օրինակ է.
1) Զուտ տեղային մոնոպոլիայի, որը կարող է ժամանակավոր բնույթ կրել
2) Բնական մոնոպոլիայի
3) Իրավական օրենքների խախտման
4) Բոլոր պատասխանները սխալ են

58. Գնային խտրականությունը.
1) Նույն արտադրանքը տարբեր գներով տարբեր գնորդներին վաճառելն է
2) Աշխատավարձի տարբերակումն է ըստ սեռի
3) Սապոման ապրանքների գների սահմանումը պետության կողմից
4) որակյալ ապրանքների դեֆիցիտ

59. Բնական մոնոպոլիայի օրինակ կարող է լինել.
1) Մետրոպոլիտենը
2) «Ֆորդ» ընկերությունը
3) «Գրանդ Քենդի» ընկերությունը
4) «Նոյ» Խմելու ջուր արտադրող ընկերությունը

60. Ոչ կատարյալ մրցակցային շուկաներն են.
1) Մոնոպոլիստական մրցակցության շուկան
2) Օլիգոպոլիան
3) Զուտ մոնոպոլիան
4) Բոլորը ճիշտ են

61. Զուտ մոնոպոլիայի շուկայում գործում է.
1) Մեկ ֆիրմա
2) Երկու ֆիրմա
3) Բազմաթիվ ֆիրմաներ
4) Ֆիրմաների քանակի սահմանափակում չկա

62. Օլիգոպոլիստական շուկայում գործում է.
1) Մեկ ֆիրմա
2) Մի քանի (3-5) խոշոր ֆիրմաներ
3) Շատ մեծ թվով ֆիրմաներ
4) Երկու ֆիրմա

63. Հակամոնոպոլիստական օրենսդրության գլխավոր նպատակն է.
1) Շուկաներում ազատ մրցակցության պաշտպանությունը և մոնոպոլիաների չարաշահումների կանխումը
2) Կոնկրետ ֆիրմայի շահերի պաշտպանությունը
3) Իրավական օրենքների, նորմերի ընդունումը
4) Սպառողական ապրանքների գների սահմանումը

ԹԵՄԱ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

64. Տնտեսական ռեսուրս չի կարելի համարել.
1) Աղբյուրի ջուրը
2) Քարհանքից հանված հանքանյութը
3) Որակյալ աշխատուժը
4) Լաբորատոր սարքավորումները

65. Նշվածներից որը չի կարելի համարել տնտեսական գործունեություն.
1) Օգտակար հանածոների արդյունահանումը
2) Բեռների փոխադրումը տրանսպորտով
3) Ապրանքների անձնական սպառումը
4) Ապրանքների գնումը՝ հետագա վերավաճառքի նպատակով

66. Տնտեսական ռեսուրս չի համարվում.
1) Ջուրը
2) Օդը
3) Հաստոցը
4) Հողը

67. Աշխատանքային ռեսուրսներ համարվում են.
1) Հաստոցը
2) Տարեց բնակչությունը
3) Աշխատուժը
4) Հողը

68. Հողը՝ որպես գործունեության ոլորտ, հանդիսանում է հիմնական միջոց.
1) Առևտրում
2) Արդյունաբերությունում
3) Հեռահաղորդակցման ոլորտում
4) Գյուղատնտեսությունում

69. Ինչո՞վ է տարբերվում գյուղատնտեսությունը արդյունաբերությունից.
1) Տնտեսական և բնական գործոնների սերտ կապով
2) Բնակլիմայական գործոնների մեծ ազդեցությամբ
3) Սեզոնայնությամբ
4) Բոլոր պատասխանները ճիշտ են

70. Որո՞նք են գյուղատնտեսության առանձնահատկությունները.
1) Հողը արտադրության հիմնական գործոնն է
2) Հողը չվերարտադրվող գործոն է
3) Հողը խիստ սահմանափակ է
4) բոլոր պատասխանները ճիշտ են

71. Հողի առաջարկը.
1) Բացարձակ ոչ առաձգական է
2) Առաձգական է
3) Ունի բարձր առաձգականություն
4) Բոլոր պատասխանները ճիշտ են

ԹԵՄԱ - ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

72. Աշխատանքի շուկային բնորոշ առանձնահատկություն է, որ աշխատանք գործոնը.
1) Հնարավոր չէ կուտակել
2) Դրա գինը կարող է կամայականորեն փոխվել
3) Շարժունակությունը փոքր է
4) Բոլոր պատասխանները ճիշտ են

73. Աշխատավարձի մեծության վրա ազդող ոչ դրամական բնույթի գործոններ են.
1) Կրթական մակարդակը
2) Որակավորման մակարդակը
3) Մշակութային պահանջմունքները
4) Բոլոր պատասխանները ճիշտ են

74. Ժամանակավարձի դեպքում աշխատավարձի մեծությունը կախված է.
1) Արտադրանքի քանակից
2) Աշխատած ժամերի քանակից
3) Աշխատավայրի հեռավորությունից
4) Բոլոր պատասխանները ճիշտ են

75. Աշխատավարձի իրական մակարդակը որոշվում է անվանական մակարդակը.
1) Ապրանքների և ծառայությունների գների հետ համեմատելով
2) Աշխատանքային օրվա տևողության հետ համեմատելով
3) Վարկերի փոփոխության հետ համեմատելով
4) Հարկադրույքների փոփոխության հետ համեմատելով

ԹԵՄԱ - ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱ ԵՎ ՏՈԿՈՍ

76. Որն է ֆիզիկական կապիտալի տարր.
    1) Հաստոցը
    2) Գործարանի շենքը
    3) Հումքը
    4) Բոլորը

77. Որպես կապիտալի սուբյեկտ կարող է լինել.
    1) Հաստոցը
    2) Արժեթղթերը
    3) Ֆինանսական միջոցները
    4) Բոլորը

78. Հիմնական կապիտալի տարր են.
    1) Բանկային հաշիվները
    2) Պետական փոխառությունները
    3) Ձեռնարկություններում եղած հումքի պաշարները
    4) Մեքենաներն ու սարքավորումները

79. Աշխատուժի որակը բնորոշ է.
    1) Ֆինանսական կապիտալին
    2) Մարդկային կապիտալին
    3) Շրջանառու կապիտալին
    4) Հիմնական կապիտալին

80. Թվարկվածներից որն է վարկավորման սկզբունք.
    1) Ժամկետայնություն
    2) Վերադարձելիություն
    3) Տոկոսի վճարում
    4) Բոլորը

81. Իրական տոկոսադրույքը հավասար է.
    1) Անվանական տոկոսադրույք — ինֆլյացիայի մակարդակ
    2) Անվանական տոկոսադրույք + ինֆլյացիայի մակարդակ
    3) Անվանական տոկոսադրույք / ինֆլյացիայի մակարդակ
    4) Իրական տոկոսադրույք / ինֆլյացիայի մակարդակ

82. Արժեթղթերը.
    1) Սեփականության իրավունք ունեցող փաստաթղթեր են
    2) Սեփականատիրոջը բերում են եկամուտ
    3) Վաճառվում և գնվում են
    4) Բոլոր պատասխանները ճիշտ են

83. Արժեթղթերի շուկան կոչվում է նաև.
    1) Ֆոնդային շուկա
    2) Աճուրդի կենտրոն
    3) Կապիտալի շուկա
    4) Փողի շուկա

84. Ձեռնարկատիրական գործունեության գործոնից բերված եկամուտը կոչվում է.
1) Տոկոս
2) Ռենտա
3) Աշխատավարձ
4) Շահույթ

85. Ձեռնարկատիրական ռիսկը կարող է լինել.
1) Ֆիրմայի հեղինակության կորուստ
2) Ֆինանսական կորուստ
3) Ժամանակի կորուստ
4) Բոլոր տարբերակները ճիշտ են

ԹԵՄԱ - ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ, ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

86. Սոցիալական շուկայական տնտեսության մեջ պետության գլխավոր նպատակն է.
1) շահույթ ստանալը
2) մրցակցության խթանումը
3) հասարակական շահի բավարարումը
4) գործարարության կայունացումը

87. Բնակչության կենսամակարդակի ցուցանիշ են.
1) աշխատող բնակչության միջին անվանական աշխատավարձը
2) թոշակների միջին մեծությունը
3) բնակչության մեկ շնչին ընկնող կենսապահովման նվազագույնը
4) բոլոր պատասխանները ճիշտ են

88. Կենսապահովման նվազագույնը ցույց է տալիս եկամտ այն մակարդակը, որը թույլ է տալիս գնել.
1) կենսագործունեության համար անհրաժեշտ ապրանքներ ու ծառայություններ
2) բավարարել սպառողի միայն ֆիզիոլոգիական պահանջմունքները
3) բավարարել միայն հոգևոր պահանջմունքները
4) բոլոր պատասխանները սխալ են

89. Բնակչության սոցիալական պաշտպանվածության միջոցառումներից են.
1) տրանսֆերտ վճարների տրամադրումը
2) սոցիալական ծրագրերի իրականացումը
3) նոր աշխատատեղերի ստեղծումը
4) բոլոր պատասխանները ճիշտ են

90. Աղքատությունը.
1) կենսամակարդակի նվազագույնն է
2) կենսամակարդակի նվազագույնից ցածր եկամուտների մակարդակն է
3) երկրորդային պահանջմունքների մակարդակն է
4) բոլոր պատասխանները ճիշտ են

ԹԵՄԱ - ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

91. Մեկ տարվա ընթացքում երկրի ներսում արտադրված ամբողջ վերջնական արդյունքը.
   1) համախառն ազգային արդյունքն է (ՀԱԱ)
   2) համախառն ներքին արդյունքն է (ՀՆԱ)
   3) ազգային եկամուտն է (ԱԵ)
   4) զուտ ազգային արդյունքն է (ԶԱԱ)

92. Մեկ տարվա ընթացքում երկրի քաղաքացիների կողմից երկրի ներսում և երկրից դուրս արտադրված արդյունքը կոչվում է.
   1) համախառն ազգային արդյունք (ՀԱԱ)
   2) համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)
   3) ազգային եկամուտ
   4) զուտ ազգային արդյունք

93. Նշվածներից որն է ՀՆԱ-ի բաղկացուցիչ տարր.
   1) տնային տնտեսուհու մատուցած ծառայությունները
   2) մարդու կողմից օգտագործված մեքենա գնելը
   3) ընկերության բաժնետոմս գնելը
   4) նոր հրատարակված գիրք գնելը

94. Հաց արտադրող գործարանի գնած ալյուրը.
   1) վերջնական արդյունք է
   2) միջանկյալ արդյունք է
   3) զուտ արդյունք է
   4) բոլոր պատասխանները ճիշտ են

95. Հացը սպառողի համար.
   1) միջանկյալ արդյունք է
   2) վերջնական արդյունք է
   3) զուտ արդյունք է
   4) բոլոր պատասխանները ճիշտ են

96. ՀՆԱ-ի մեծության որոշման ժամանակ կրկնակի հաշվարկից խուսափելու համար պետք չէ հաշվարկել.
   1) վերջնական արդյունքի արժեքը
   2) միջանկյալ արդյունքի արժեքը
   3) ավելացված արժեքի մեծությունը
   4) համախառն մասնավոր ներդրումները

97. Ըստ եկամուտների հաշվարկման մեթոդի ՀՆԱ-ի մեջ ներառվում են.
   1) աշխատավարձը և տոկոսը
   2) ռենտան և շահույթը
   3) անուղղակի հարկերը
   4) բոլոր պատասխանները ճիշտ են

98. Ըստ ծախսերի հաշվարկման մեթոդի ՀՆԱ-ի մեջ ներառվում են.
1) զուտ ներդրումները և բնակչության սպառողական ծախսերը
2) ապրանքների և ծառայությունների պետական գնումները
3) զուտ արտահանման տարբերությունը (+, -)
4) <u>բոլոր տարբերակները ճիշտ են</u>

99. Անվանական ՀՆԱ-ն հաշվարկվում է.
1) <u>ընթացիկ տարվա շուկայական գներով</u>
2) բազիսային տարվա գներով
3) միջին գներով
4) բոլոր տարբերակները ճիշտ են

100. Իրական ՀՆԱ-ն հաշվարկվում է.
1) ընթացիկ տարվա շուկայական գներով
2) <u>բազիսային տարվա գներով</u>
3) միջին գներով
4) մշտական գներով

ԹԵՄԱ - ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ ԵՎ ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ

101. Ամբողջական (համախառն) պահանջարկը.
1) անհատական պահանջարկների գումարային մեծությունն է
2) ՀՆԱ-ին հավասար մեծությունն է
3) ունի բացասական թեքվածություն ունեցող կորի արտահայտություն
4) <u>բոլոր պատասխանները ճիշտ են</u>

102. Ամբողջական պահանջարկը.
1) <u>ապրանքների և ծառայությունների արժեքային մեծությունն է</u>
2) ապրանքների և ծառայությունների քանակն է, որը ցանկանում է գնել սպառողը, սակայն վճարունակ չի
3) ապրանքների և ծառայությունների այն քանակն է, որ դուրս է բերվել շուկա
4) բոլոր պատասխանները ճիշտ են

103. Ո՞ր գործոնի ազդեցությամբ ամբողջական պահանջարկի մեծությունը կտեղաշարժվի կորի վրա.
1) <u>գների մակարդակի աճ</u>
2) հարկերի փոփոխություն
3) տոկոսադրույքի էֆեկտ
4) ինֆլյացիոն սպասումներ

104. Որո՞նք են ամբողջական պահանջարկի վրա ազդող գնային գործոնները.
1) տոկոսադրույքի էֆեկտ
2) հարստության էֆեկտ
3) ներմուծման էֆեկտ
4) <u>բոլոր պատասխանները ճիշտ են</u>

105. Ո՞ր գործոնն է ամբողջական պահանջարկի կորը տեղաշարժում աջ կամ ձախ.
1) <u>հարկերի փոփոխությունը</u>
2) ներմուծման էֆեկտը
3) տոկոսադրույքի էֆեկտը
4) հարստության էֆեկտը

106. Ամբողջական առաջարկը.
1) անհատական առաջարկների գումարային մեծությունն է
2) ազգային արտադրության կայուն և հավասար մեծությունն է
3) ունի դրական թեքվածություն ունեցող կորի տեսք
4) <u>բոլոր պատասխանները ճիշտ են</u>

107. Ամբողջական առաջարկը.
1) ապրանքների և ծառայությունների այն քանակն է, որը սպառողները ցանկանում են գնել տվյալ գնով տվյալ պահին
2) զուտ ազգային արդյունքի ծավալն է
3) <u>արտադրանքի և ծառայությունների այն քանակն է, որը երկրի ֆիրմաները պատրաստ են բերել շուկա գների տվյալ մակարդակի պայմաններում</u>
4) բոլոր պատասխանները ճիշտ են

108. Ոչ գնային գործոնները կտեղաշարժեն առաջարկի կորը աջ կամ ձախ.
1) <u>այո</u>
2) միայն աջ
3) կթողնեն նույն դիրքում
4) բոլոր պատասխանները սխալ են

ԹԵՄԱ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆ, ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՆՖԼՅԱՑԻԱ

109. Շուկայական տնտեսությանը բնորոշ է.
1) պետության կողմից բոլոր ապրանքների գների սահմանումը
2) անկայունությունը
3) <u>պարբերաշրջանային զարգացումը</u>
4) բոլոր տարբերակները ճիշտ են

110. Տնտեսական պարբերաշրջանը պայմանավորված է.
1) արտաքին գործոնների ազդեցությամբ
2) ներքին գործոնների ազդեցությամբ
3) ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի վրա ազդող գործոններով
4) <u>բոլոր պատասխանները ճիշտ են</u>

111. Նշվածներից որը չի վերաբերում տնտեսական պարբերաշրջանի փուլերին.
1) վերելք
2) ճգնաժամ
3) աշխուժացում
4) <u>ինֆլյացիա</u>

112. Ի՞նչ է ցույց տալիս տրենդը.
1) տնտեսության զարգացման պատկերը երկարատև ժամանակահատվածում՝ անկախ տնտեսական տատանումներից
2) տնտեսության պարբերաբար կրկնվող վերելքն ու անկումը
3) երկրի տնտեսության տեղը միջազգային առևտրում
4) գների տատանումները

113. Տնտեսության անկման հետևանքով առաջացած գործազրկությունը կոչվում է.
1) Ֆրիկցիոն
2) Կառուցվածքային
3) Պարբերաշրջանային (ցիկլային)
4) Կամավոր

114. Իր կամքով աշխատանքից ազատված և նոր աշխատանք փնտրող մարդը համարվում է.
1) Ֆրիկցիոն գործազուրկ
2) Կառուցվածքային գործազուրկ
3) Պարբերաշրջանային գործազուրկ
4) Սեզոնային

115. Գործազրկության բնական մակարդակը ներառում է.
1) Ցիկլային գործազրկությունը
2) Ֆրիկցիոն և կառուցվածքային գործազրկությունը
3) Ցիկլային և ֆրիկցիոն գործազրկությունը
4) Բոլորը

116. Չկանխատեսված ինֆլյացիայից առավել քիչ տուժում են նրանք.
1) Ովքեր ստանում են կայուն անվանական եկամուտ
2) Ովքեր ունեն նաև դրամական խնայողություններ
3) Ովքեր պարտք են վերցրել ցածր տոկոսադրույքով
4) Ում անվանական եկամուտներն աճում են, բայց ավելի դանդաղ, քան գների աճը

117. Եթե մարդիկ իրենց եկամուտները չեն սպառում, ապա նրանք.
1) Խնայողություն են կատարում
2) Ինվեստիցիա են դարձնում
3) Ոչ խնայողություն են կատարում, ոչ էլ ինվեստիցիա
4) Խնայողություն են կատարում, բայց ոչ ինվեստիցիա

118. Թվարկվածներից որը կարելի է անվանել ինվեստիցիա.
1) պետական փոխառությունների գնումը
2) դրամական եկամուտը
3) բաժնետոմսերի վաճառքը
4) ոչ մեկը

119. Ինվեստիցիաների ծավալների վրա ազդում են.
1) տոկոսադրույքի մակարդակը
2) ձեռնարկատիրոջ սպասումները
3) տեխնոլոգիական փոփոխությունները
4) բոլոր տարբերակները ճիշտ են

ԹԵՄԱ - ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

120. Հարկաբյուջետային քաղաքականությունն ազդում է.
1) ազգային եկամտի մակարդակի վրա
2) արտադրության ծավալների և զբաղվածության վրա
3) գների մակարդակի վրա
4) բոլոր տարբերակները ճիշտ են

121. Տրանսֆերտային վճարները.
1) անվերադարձ և անփոխհատույց վճարներ են
2) պետության կողմից առանձին անհատներին տրվող վճարներ են
3) եկամտի բաղադրիչ է, որն ազգային եկամտի մեջ չի մտնում
4) բոլոր տարբերակները ճիշտ են

122. Եթե կառավարությունը նախատեսում է մեծացնել իրական ՀՆԱ-ի մակարդակը, ապա նա կարող է կրճատել.
1) ապրանքների և ծառայությունների պետական գնումները
2) հարկային տոկոսադրույքները
3) տրանսֆերտային վճարները
4) բոլոր տարբերակները ճիշտ են

123. Ավելացված արժեքի հարկը վերաբերում է.
1) պրոգրեսիվ եկամտահարկերին
2) ապրանքների և ծառայությունների վրա սահմանվող անուղղակի հարկերին
3) կորպորացիաների եկամուտների վրա սահմանվող հարկերին
4) ժառանգության հարկերին

124. Նշվածներից որն է ուղղակի հարկ.
1) եկամտահարկ
2) շահույթահարկ
3) հողի հարկ
4) բոլորը

125. Նշվածներից որն է անուղղակի հարկ.
1) ակցիզային հարկ
2) ավելացված արժեքի հարկ
3) մաքսատուրք
4) բոլորը

126. Ուղղակի հարկ վճարողներն են.
1) ֆիզիկական անձինք
2) իրավաբանական անձինք
3) անշարժ գույքի սեփականատերերը
4) բոլորը

127. Անուղղակի հարկեր վճարում են.
1) վերջնական սպառողները
2) պետությունը
3) միայն օտարերկրյա քաղաքացիները
4) բոլոր պատասխանները ճիշտ են

128. Ռեգրեսիվ հարկման դեպքում.
1) եկամտի աճին զուգահեռ հարկադրույքը աճում է
2) եկամտի աճին զուգահեռ հարկադրույքը նվազում է
3) եկամտի աճին զուգահեռ հարկադրույքը մնում է հաստատուն
4) բոլոր պատասխանները սխալ են

129. Պրոգրեսիվ հարկման դեպքում.
1) եկամտի աճին զուգահեռ հարկադրույքը աճում է
2) եկամտի աճին զուգահեռ հարկադրույքը նվազում է
3) եկամտի աճին զուգահեռ հարկադրույքը մնում է հաստատուն
4) բոլոր պատասխանները սխալ են

130. Հաստատագրված հարկման դեպքում.
1) եկամտի աճին զուգահեռ հարկադրույքը աճում է
2) եկամտի աճին զուգահեռ հարկադրույքը նվազում է
3) եկամտի փոփոխությունից անկախ հարկադրույքը մնում է հաստատուն
4) բոլոր պատասխանները սխալ են

131. Պետական բյուջեի պակասուրդ առաջանում է այն դեպքում, երբ.
1) պետության ակտիվների գումարը գերազանցում է նրա պարտավորությունների չափերը
2) պետության ծախսերի գումարը գերազանցում է հարկային մուտքերի չափերը
3) պետության ծախսերը կրճատվում են
4) պետության պարտավորությունները չեն գերազանցում նրա ակտիվների չափերը

132. Ինչ տնտեսական հետևանքներ կարող է ունենալ պետական պարտքը.
1) կրճատել տնտեսական արտադրողական հնարավորությունները
2) իջեցնել կենսամակարդակը
3) մեծացնել կախվածությունը այլ երկրներից
4) բոլոր պատասխանները ճիշտ են

133. Երբ ազգային արժույթի միջազգային կուրսը բարձրանում է, ապա դա հանգեցնում է.
1) արտահանման աճին
2) ներմուծման կրճատմանը
3) արտահանման կրճատմանը և ներմուծման աճին
4) արտահանման և ներմուծման ծավալները մնում են անփոփոխ

ԹԵՄԱ - ՓՈՂԻ ՇՈՒԿԱ: ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

134. Փողերը ծառայում են որպես.
1) շրջանառության միջոց
2) արժեքների պահպանման միջոց
3) հաշվարկային միավոր
4) բոլոր տարբերակները ճիշտ են

135. «Փողի պահանջարկ» հասկացությունը նշանակում է.
1) արժեթղթեր ունենալու ցանկություն
2) փողի այն քանակը, որը կարելի է վարկով տալ
3) ակտիվների համար ներկայացվող պահանջարկ
4) ակտիվների և գործարքների համար պահանջվող փողի քանակ

136. Եթե անվանական ՀՆԱ-ն կազմում է 4000 մլրդ դրամ, իսկ փողի գործարքային պահանջարկի ծավալը՝ 2800 մլրդ դրամ, ապա.
1) Փողի պահանջարկն ըստ ակտիվների կկազմի 3200 մլրդ դրամ
2) Փողի ընդհանուր պահանջարկը կկազմի 4800 մլրդ դրամ
3) փողի մեկ միավորը տարեկան կկատարի 5 շրջապտույտ
4) Փողի պահանջարկը կրկնակի կաճի

137. Առևտրային բանկերը, բացելով ընթացիկ հաշիվներ, տրամադրում են վարկեր, որի հետևանքով փողի զանգվածը.
1) Աճում է ավանդների ընդհանուր գումարի չափով
2) Աճում է ավելի մեծ չափով, քան ավանդները
3) Կրճատվում է վարկերի տրամադրման չափով
4) Աճում է ավանդների որոշակի չափով

138. Դրամական բազմարկիչը (մուլտիպլիկատորը).
1) Ավանդների գումարի հարաբերությունն է պարտադիր պահուստների նորմատիվին
2) Պարտադիր պահուստային նորմատիվի հակադարձ մեծությունն է
3) Ակտիվների և պասիվների հարաբերությունն է
4) Բանկի սեփական կապիտալի և ավանդների հարաբերությունն է

139. Եթե ԿԲ-ն ձգտում է մեծացնել ՀՆԱ ծավալը, ապա ի՞նչ պետք է անի.
1) Գնի պետական արժեթղթեր բաց շուկայում՝ ներդրումային ծախսերը մեծացնելու համար
2) Բարձրացնի վարկի տոկոսադրույքները
3) Մեծացնի բանկային ռեզերվները (պահուստները)
4) Մեծացնի ընթացիկ հաշիվներում միջոցների քանակը

140Կանոնավոր պայմաններում ԿԲ-ն ի՞նչ գործիքներ է կիրառում.
1) Արժեթղթերի գնում կամ վաճառք, վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխություն
2) Օրենքով սահմանված պարտադիր պահուստների նորմայի փոփոխություն
3) բաց շուկայի գործառնություններ, հաշվարկային տոկոսադրույքի փոփոխություն
4) Համոզման կամ խորհրդատվական մեթոդներ

ԹԵՄԱ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

141. Զարգացած երկրներում տնտեսական աճը, որպես կանոն, դրսևորվում է.
1) Աշխատաժամանակի ծավալների մեծացմամբ
2) Տեխնոլոգիական առաջընթացով և արտադրողականության աճով
3) ՀՆԱ ծավալների էքստենսիվ աճով
4) Կիրառվող կապիտալի քանակական աճով

142. Ո՞ր ցուցանիշն է ավելի ընդգրկուն արտացոլում տնտեսության պոտենցիալը.
1) Իրական ՀՆԱ-ի ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով
2) Անվանական ՀՆԱ-ի ծավալը
3) Ընտանիքի միջին շնչային եկամուտը
4) Բոլորը ճիշտ են

143. Տնտեսական աճի իրական պատկերը հնարավոր է պարզել.
1) Կարճաժամկետ հատվածում
2) Մեկ տարվա արդյունքներով
3) Երկարատև ժամանակահատվածի դինամիկայում
4) ՀՆԱ-ի ընթացիկ գներով

144. Աշխատանքի արտադրողականությունը չափվում է.
1) Արտադրանքի ծավալի և աշխատանքի ծախսերի (աշխատաժամերի) հարաբերությամբ
2) Աշխատանքի ծախսերի և կապիտալի հարաբերությամբ
3) Արտադրանքի ծավալի և զբաղվածների թվի հարաբերությամբ
4) Աշխատաժամանակի մեծության և արտադրանքի արժեքի հարաբերությամբ

145. Տնտեսական աճը կարելի է պատկերել.
1) Արտադրական հնարավորությունների կորի տեղաշարժով դեպի աջ
2) Արտադրական հնարավորությունների կորի տեղաշարժով դեպի ձախ
3) Արտադրական հնարավորությունների կորի վրա տեղաշարժով
4) Բոլոր պատասխանները ճիշտ են

146. Եթե ՀՆԱ ծավալներն աճում են ավելի արագ, քան բնակչության թիվը, ապա բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն.
1) Աճում է
2) Նվազում է
3) Մնում է անփոփոխ
4) Բոլոր պատասխանները սխալ են

147. Հովանավորչական (պրոտեկցիոնիզմի) քաղաքականության նպատակն է.
1) Սահմանել մաքսատուրքեր և քվոտաներ՝ ներքին շուկան օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու համար
2) Երկրի ներսում զբաղվածության մակարդակը մեծացնելու համար
3) Երկրի մրցունակության բարձրացման համար
4) Բոլոր պատասխանները ճիշտ են

148. Միջազգային առևտրային արգելքներից որո՞նք կարող են սահմանափակել ազատ առևտուրը.
1) Սակագներն ու մաքսատուրքերը
2) Ներմուծման քվոտաները
3) Ներմուծման և արտահանման լիցենզիաները կամ հատուկ պայմանները
4) Բոլորը

149. Առևտրային հաշվեկշռի սալդոն դրական է համարվում, երբ.

1) Ներմուծումը գերազանցում է արտահանմանը
2) Արտահանումը գերազանցում է ներմուծմանը
3) Արտահանումն ու ներմուծումը հավասար են
4) Տեղի է ունենում միայն ներմուծում

150. Առևտրային հաշվեկշռի սալդոն համարվում է բացասական, եթե.

1) Արտահանումը գերազանցում է ներմուծմանը
2) Արտահանումը հավասար է ներմուծմանը
3) Ներմուծումը գերազանցում է արտահանմանը
4) Տեղի է ունենում միայն արտահանում

Մաղթում ենք հաջողություն